



## **«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»**

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ-ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ԱՌԱՐԿԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ-Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ-Ն. ՔԱՐԱՄՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ-ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ

ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ Ա. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

Բովանդակություն

1.Ներածություն

2.Հիմնական մասի գլուխներ և ենթագլուխներ

3.Եզրակացություններ և առաջարկություններ

4.Օգտագործված գրականության ցանկ, Հավելված  
(հղումներ)

Ներածություն

Ինչպե՞ս են մարդիկ օգտագործում անտառները, ջուրը, հողը: Բնության նկատմամբ անխնա վերաբերմունքը վկայում է, որ մարդը, դեռևս կամ այլևս պատրաստ չէ ներդաշնակ հարաբերությունների մեջ գտնվել իրեն շրջապատող աշխարհի հետ: Մինչդեռ, հայ իրականության մեջ, այդպես չի եղել: Հայկական եկեղեցիների ճարտարապետական գարդաքանդակներում նռան և խաղողի պատկերների առատությունը վկայում է հայ իրականության համար դրանց մշակութային կարևորության մասին: Հայկական ազգային մտածողության ու պատկերացումների մեջ մեծ տեղ է գրավել մարդու կապը բնության հետ: Սարդուր թագավորն արհեստական անտառներ է տնկել այն ժամանակվա մայրաքաղաք Տուշպայի (Վան) շուրջը քաղաքի կլիման բարելավելու նպատակով: Ուրարտացի թագավորը հասկանում էր, որ ծառերը գեղեցկացնում են քաղաքները և ավելի համաչափ՝ կլիմայական պայմաններ ստեղծում՝ նվազեցնելով խիստ բարձր ջերմաստիճանը:

Այսօր մեզ հայտնի է, որ ծառերը նաև մաքրում են օդը ծխից ու փոշուց, որոնք նստում են տերևների վրա և անձրևների միջոցով լվացվում ու թափվում հողին: Ծառերի արմատային համակարգերը թույլ չեն տալիս, որ հորդառատ անձրևները քշեն-տանեն գառնիթափների հողը, ինչպես նաև կանխում են սողանքներն ու ջրհեղեղները:

Ժամանակին ինչ կանաչապատ էին Երևանի փողոցները՝ լի բազմազան ծառատեսակներով: Երբեմնի ծառածածկ զբոսայգիներն ու անտառներն ամայացան:

Որոշ հետազոտողների տվյալներով այսօր անտառածածկույթի տոկոսային հարաբերությունը 8-ից էլ ցածր է: Բնակիչներն իրենց ամենօրյա կյանքում զգում են այդ անտառահատման հետևանքները. օդի աղտոտվածության աճ, հողի Էրոզիա, սողանքներ և երբեմնի անտառային գոտիների անապատացում:

Ուստի այսօր խիստ կարևոր է Էկոլոգիական դաստիարակության իրականացումը...

**Էկոլոգիան որպես գիտություն,**

**կառուցվածքը, ուսումնասիրության առարկան և օբյեկտը**

Էկոլոգիա բառը առաջացել է հունարեն օյկոս, որը նշանակում է տուն կամ կացարան, և լոգոս՝ գիտություն բառերից և բառացի թարգմանությամբ նշանակում է գիտություն բնական տան մասին: Էկոլոգիա տերմինն առաջին անգամ 1866 թ. առաջարկել է գերմանացի կենդանաբան Է. Յեկկելը: Նա այդ գիտությանը տվել է հետևյալ սահմանումը. «Էկոլոգիան գիտություն է օրգանիզմների և միջավայրի պայմանների միջև գոյություն ունեցող փոխազդեցությունների մասին»: Յեկկելը միջավայրի պայմանները բաժանել է երկու բաղադրիչների՝ անօրգանական և օրգանական: Գոյության անօրգանական պայմաններ են հանդիսանում բնակատեղի ֆիզիկական և քիմիական առանձնահատկությունները՝ հանքային սնուցումը, ջրի կազմությունը, հողի հատկությունները և այլն: Գոյության օրգանական պայմանները ձևավորվում են օրգանիզմների փոխհարաբերությունների արդյունքում: Էկոլոգիա տերմինն առաջին անգամ օգտագործվել է այն ժամանակ, երբ խոսքը գնում էր բուսական և կենդանական համակեցությունների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների մասին, համակեցություններ, որոնք ներկայացնում են կայուն և կազմակերպված համակարգեր և ձևավորվել են օրգանական աշխարհի և շրջակա միջավայրի փոխազդեցության գործընթացի երկարատև զարգացման ընթացքում: Յեկկելը Էկոլոգիան դասել է կենսաբանական գիտությունների շարքին:

Ժամանակակից Էկոլոգիան երեք հորիզոնական շերտերից կազմված, եռամակարդակ կառուցվածք է: Առաջին մակարդակի մեջ են մտնում առանձնյակները, երկրորդ մակարդակի մեջ՝ պոպուլյացիաները և համակեցությունները, իսկ երրորդ մակարդակն զբաղեցնում են Էկոհամակարգերը: Այսպիսով, ժամանակակից Էկոլոգիայի օբյեկտ են հանդիսանում առանձին օրգանիզմները (առանձնյակներ), պոպուլյացիաները (միևնույն տեսակի առանձնյակների խումբ) և կենսացենոզները (կենսաբանական տեսակների տարբեր պոպուլյացիաների ամբողջություն): Սակայն Էկոհամակարգերի ուսումնասիրությունը հանդիսանում է Էկոլոգիայի հիմնական բաժինը՝ ուսումնասիրության օբյեկտը: Ըստ կենսաբանական համակարգերի կազմավորման մակարդակների՝ ժամանակակից Էկոլոգիայում տարբերում են երեք հիմնական ուղղություն՝ աուտոէկոլոգիա, դեմէկոլոգիա և

սինէկոլոգիա: Հաճախ այդ ուղղություններին ավելացնում են Էկոհամակարգերի և կենսոլորտի գործունեության մասին ուսմունքները: Այդ ուղղությունները կազմում են ընդհանուր Էկոլոգիան:

Ըստ ուսումնասիրության օբյեկտի հանդեպ ունեցած վերաբերմունքի՝ Էկոլոգիան ստորաբաժանում են միկրոօրգանիզմների (պրոկարիոտներ), սնկերի, բույսերի, կենդա նիների, մարդու, գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդհանուր (որը տեսականորեն ընդհանրացնում է առարկան) և նթարածիների: Էկոլոգիայի այս ուղղությունը կոչվում է մասնավոր (հատուկ) Էկոլոգիա, որն զբաղվում է կոնկրետ օրգանիզմների համակեցությունների գործունեության ուսումնասիրությամբ: Մասնավոր Էկոլոգիան ներառում է նաև կիրառական Էկոլոգիան: Այն ուսումնասիրում է մարդու առողջության և ընդհանրապես բնության վրա մարդածին գործոնի անցանկալի ազդեցությունը կանխելու միջոցառումների հետևանքները: Այդ խնդրի լուծումը միայն կենսաբանության ձեռքբերումներով հնարավոր չէ: Այդ նպատակի համար ներկայումս օգտագործվում են քիմիայի, ֆիզիկայի ձեռքբերումները և ինժեներական գիտելիքները: Ըստ միջավայրի և բաղադրամասերի տարբերակվում են ցամաքի, քաղցրահամ ջրամբարների, ծովերի, բարձրլեռնային, քիմիական (երկրաքիմիական և կենսաերկրաքիմիական) Էկոլոգիայի ուղղությունները: Ըստ առարկայի հանդեպ դրսևորվող մոտեցման՝ Էկոլոգիան լինում է վերլուծական և շարժընթացային (դինամիկ), ժամանակային գործոնի առումով՝ պատմական և զարգացման:

Մարդու Էկոլոգիան կամ սոցիալական Էկոլոգիան ուսումնասիրում է հասարակության և շրջակա միջավայրի փոխազդեցության օրինաչափությունները և դրա պահպանության գործնական հիմնահարցերը: Պետք է նշել, որ մարդու Էկոլոգիայի և սոցիալական Էկոլոգիայի միջև գոյություն ունեն տարբերություններ: Հիմնական տարբերությունն այն է, որ սոցիալական Էկոլոգիան չի ընդգրկում մարդու կենսաբանական կողմը: Ծատ հաճախ թյուրիմացաբար «Էկոլոգիա» և «բնապահպանական գործունեություն» հասկացությունները ներկայացվում են առանց տարբերակման: Բնության պահպանությունը ներկա և մարդկության ապագա սերունդների շահերին համապատասխան երկիր մոլորակի և դրան սահմանակից տիեզերական տարածության պահպանման, ռացիոնալ օգտագործման և վերականգնման

համար մշակվող միջազգային, պետական, տարածքային, տեղային վարչատնտեսական, տեխնոլոգիական, քաղաքական, իրավաբանական և հասարակական միջոցառումների ամբողջությունն է: Շրջակա միջավայրի պահպանությունն իր ուշադրությունը կենտրոնացնում է մարդու շրջակա միջավայրի և մարդու պահանջմունքների վրա: Դա բնական համակարգերի գործունեությունը ապահովելուն նպատակաուղղված միջոցառումների (միջազգային, պետական վարչատնտեսական, հասարակական և այլն) ամբողջությունն է, որն անհրաժեշտ է մարդու առողջությունը և բարեկեցությունը պահպանելու համար:

Այսպիսով, «Էկոլոգիա», «բնության պահպանություն» և «շրջակա միջավայր» հասկացությունները առանց համապատասխանության ներկայացնելը ճիշտ չէ, քանի որ Էկոլոգիան՝ որպես օրգանիզմների և նրանց գոյության միջավայրի փոխազդեցությունների մասին հիմնարար գիտություն, ունի ավելի լայն ընդգրկում, քան բնական միջավայրի պահպանության մասին ուսմունքը:

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը Էկոլոգիայի կիրառության ոլորտներն են, որոնց զարգացման համար հիմք են համարվում Էկոլոգիայի տեսական գիտելիքները:

Կարևոր է որոշել կապը «Էկոլոգիա», «բնության պահպանություն» և «շրջակա բնական միջավայրի պահպանություն» հասկացությունների միջև: Շրջակա բնական միջավայրը մարդու և այլ կենդանի օրգանիզմների բնակության և գործունեության բնական միջավայրն է, որն ընդգրկում է քարոլորտը, ջրոլորտը, մթնոլորտը, կենսոլորտը և երկրամերձ տիեզերական տարածությունը: «Բնություն» հասկացությունը ավելի նեղ է և մեկնաբանվում է որպես գոյացումների բնական համալիր, որը չի ենթարկվել կամ աննշան չափով է ենթարկվել մարդկային գործունեության ազդեցությանը:

Շրջակա բնական միջավայրի վիճակը բնութագրող ցուցանիշների համախումբը կոչում են շրջակա բնական միջավայրի որակ:

Բնության պահպանությունը գործունեություն է՝ ուղղված կենդանի օրգանիզմների բնական միջավայրի պահպանմանը և տեխնածին, ագրածին և

այլ մարդածին ծանրաբեռնվածությունների պայմաններում բնական ռեսուրսների պահպանմանը: Շրջակա բնական միջավայրի պահպանությունը իրենից ներկայացնում է պետական և հասարակական միջոցառումների համակարգ, որոնք ուղղված են բնական ռեսուրսների վերարտադրությանը և ռացիոնալ օգտագործմանը ու բնական միջավայրի վիճակի լավացմանը և հանդիսանում է կիրառական Էկոլոգիայի մասը:

Էկոլոգիայի զարգացման պատմությունը: Էկոլոգիայի տեղը բնական գիտությունների համակարգում

Եկոլոգիան համեմատաբար երիտասարդ գիտություն է և անցել է զարգացման երեք փուլեր:

Առաջին փուլ (XVII–XVIII դ.) — Եկոլոգիական գիտության ձևավորման շրջանն է: Բնութագրվում է օրգանիզմների և բնական պայմանների փոխադարձ կապերի վերաբերյալ նյութերի հավաքագրումով: Այդ շրջանում Թ. Մալթուսը և Ժ. Բ. Լամարկը հիմնավորեցին բնության վրա մարդու բացասական ազդեցությունը:

Երկրորդ փուլ (XIX դ. երկրորդ կես) — Եկոլոգիան ձևավորվում է որպես գիտության առանձին ճյուղ: Ռուս գիտնականներ Ն.Ս. Սևերցովը, Վ.Վ. Դոկուչանը և ուրիշներ շարադրում են Եկոլոգիայի հիմնական սկզբունքները և հասկացությունները, որոնք մինչև այժմ գործածվում են:

Գերմանացի Կ. Մերիուսը 1887թ. մտցրեց կենսացենոզ հասկացությունը:

Եկոլոգիական գիտության զարգացման գործում հսկայական ներդրում ունի Չ. Դարվինը: Նա բացահայտել է կենդանի օրգանիզմների Էվոլյուցիայի հիմնական գործոնները:

Եկոլոգիան որպես ինքնուրույն գիտություն վերջնականապես ձևավորվել է XX դարի սկզբներին: Այդ շրջանում հրատարակվել են արտերկրացի գիտնականների (Չ. Ադամս, Վ. Շելֆորդ և ուրիշներ) շատ աշխատություններ: Եկոլոգիական գիտության մեջ XX դարի երկրորդ կեսում հատուկ ուշադրության են արժանացել շրջակա միջավայրի մարդածին աղտոտման հարցերը և բնության պահպանության գիտական հիմնախնդիրները (Գ. Ա. Կոժնիկով, Ս. Վ. Չավադսկի և ուրիշներ):

Երրորդ փուլ (XX դարի երկրորդ կեսից մինչև այժմ) — Եկոլոգիան դարձավ համալիր գիտություն, որը ներառեց նաև շրջակա միջավայրի և բնական պայմանների պահպանության խնդիրները:

Եկոլոգիայի հենքի վրա, երրորդ փուլում, ձևավորվել է «Բնապահպանության հիմունքներ» գիտությունը: 1959թ. Յ. Ն. Կուրաժկովսկին մտցրել է «բնապահպանություն» հասկացությունը և տվել դրա ձևակերպումը:



Վերջին տասնամյակներում ձևավորվել է գեոէկոլոգիա գիտության նոր ճյուղը, որն ուսումնասիրում է ցամաքային և ջրային տարածքների մարդածին ազդեցության փոփոխությունները և դրանց հետևանքները:

Ժամանակակից էկոլոգիան դուրս է եկել կենսաբանական գիտության սահմաններից և ներառել է գիտության գրեթե բոլոր ոլորտները: Կարելի է հաստատել, որ բնական, տեխնիկական և հասարակական գիտությունները այժմ «էկոլոգացված» են: Մարդկային հասարակության և բնության բարդ փոխհարաբերությունների ուսումնասիրությունները էկոլոգիական հիմնարար խնդիրներից են:

Էկոլոգիան այժմ սերտորեն կապված է քաղաքական, տնտեսական, իրավունքի, հոգեբանական, մանկավարժական և այլ գիտական ուղղությունների հետ: Միայն համալիր գիտելիքների իմացությամբ է հնարավոր ստեղծել էկոլոգիական ժամանակակից մտածողություն, որը կարող է փոխել մարդու վերաբերմունքը շրջակա բնական միջավայրի նկատմամբ:

Ժամանակակից էկոլոգիան համարվում է ոչ միայն կենսաբանական, այլև սոցիալ-բնական համալիր գիտություն: Դրա գործնական ուսումնասիրության առարկան ներառում է մարդու գործառության բոլոր կողմերը: Մարդը ձեռք բերելով էկոլոգիական գիտելիքներ աստիճանաբար կարող է փոխել վերաբերմունքը բնության նկատմամբ, հասկանալ, որ բնության մեջ գործող օրենքները պատահական չեն և անհրաժեշտ են մարդկային հասարակության գոյության և զարգացման համար: Բնական օրենքների չճանաչելը կամ գիտակցորեն դրանց խախտումները կարող են բերել անդարձելի ծանր հետևանքների:

## Էկոլոգիական աշխարհայացք: Բնապահպանական կրթություն. հայեցակարգի հիմքը

Այն արտացոլում է մարդու ու բնության այժմյան փոխհարաբերությունների և մտածողության ամբողջությունը: Էկոլոգիական մտածողության

ամենատարածված ձևը, որը գերակայել է արդյունաբերության զարգացման սկզբնական շրջանից-մինչև XIX դարի երկրորդ կեսը, համարվում է մարդակենտրոն (անթրոպոցենտրիզմ) մտածողությունը, որը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով. մարդը վեր է ամեն ինչից, բնությունը մարդու սեփականությունն է:

1. Աշխարհը համաստորադաս կառուցվածք ունի, բրգաձև կառուցվածքի ամենաբարձր կետում մարդն է:
2. Բնության հետ փոխհարաբերությունները նպատակուղղված են միայն մարդու պահանջմունքի բավարարմանը:
3. Ճիշտ և թույլատրելի է այն, որը բավարարում է մարդու պահանջմունքները:
4. Էթնիկ նորմերը և իրավունքները գործում են միայն մարդկային՝ հասարակության մեջ և չեն տարածվում բնաշխարհի վրա:
5. Բնության զարգացման ամբողջ ընթացքը պետք է ենթարկվի մարդկության զարգացմանը:

Այսպիսի մտածողությունը կարող է կործանարար լինել և այդ պատճառով ստեղծվել է նոր՝ բնակենտրոն (էկոցենտրիկ) մտածողություն, որի դրույթներն են՝

1. Բարձրագույն արժեք համարել մարդու և բնության ներդաշնակ զարգացումը: Մարդը բնական համակեցության անդամ է:
2. Մերժել աշխարհի համաստորադասական (հիերարխիական) կառուցվածքը:
3. Մարդու և բնական համակեցությունների պահանջների հավասար բավարարում:
4. Ճիշտ և թույլատրելի է այն, որը չի խաթարում բնական էկոլոգիական հավասարակշռությունը:
5. Էթնիկ նորմերը և իրավունքները հավասարապես տարածվում են և մարդկային հարաբերությունների, և բնական աշխարհի վրա:
6. Մարդու և բնության զարգացումը փոխշահավետ կոեվոլյուցիոն միասնական ընթացք է:

Աշխարհի բոլոր երկրները այժմ մշակում և փորձում են ձևավորել միասնական էկոլոգիական աշխարհայացք:

Բնապահպանական կրթությունը կարող է ընդգրկել ամենաբազմազան տեղեկատվություն, որին տիրապետելն ու ուսուցանելը կարող է որոշակի առումով դժվար լինել ուսուցչի համար: Հայեցակարգային այս հիմքն ընդգծում է անտառների կարևորությունը բնապահպանական և սոցիալական

տեսանկյունից, ինչպես նաև բնապահպանական կրթությունը բաժանում է ուսուցանելի հասկացությունների: Վերջիններս կազմակերպված ու կանոնակարգված են այնպես, որ դյուրին լինի դրանց հաղորդումը: Հայեցակարգային այս հիմնավորումն ինքնին ուսումնական ծրագիր չէ, սակայն այստեղ սահմանվող կարևորագույն հասկացությունները դասապլանների առանցքային բառապաշարն են:

**Բնապահպանական կրթություն: Հիմնական սահմանումը:**  
**Բնապահպանական կրթության պատմական զարգացումը:**  
**Դաստիարակություն և մշակույթ**

Բնապահպանական կրթությունը (ԲԿ) կոչված է դաստիարակելու, ձևավորելու այնպիսի հասարակություն, որը ոչ միայն տեղյակ է բնապահպանության հիմնախնդիրներին ու հարակից հարցերին և մտահոգված է դրանցով, այլ նաև ունի որոշակի գիտելիքներ, վերաբերմունք, հմտություններ, շարժառիթներ ու

Նվիրում թե՛ անհատապես և թե՛ միասնական ջանքերով ընթացիկ խնդիրները լուծելու և նորերը կանխելու համար: Բուլորովին վերջերս ի հայտ եկած «բնապահպանական կրթություն» համեմատաբար անըմբռնելի հասկացությունն այսօր հասել է այն մակարդակին, որ արդեն քննարկվում է որպես աշխարհի կայունությանը հասնելուն նպաստող մի գործոն:

Բուսաբանության պրոֆեսոր, շոտլանդացի Պատրիկ Գեդիսը (1854-1933 թթ.)՝ արժանացել է «բնապահպանական կրթության հայր» կոչմանը: Նա առաջիններից էր, որ այդ ոլորտում նոր գաղափարներ առաջադրեց, ինչպես նաև երեխային որպես «ամբողջական անձ» դիտարկող այնպիսի նորարարական մանկավարժական մեթոդներ կիրառեց, ինչպիսիք են բացօթյա պարապմունքները, «սովորել գործնականում» միջառարկայական մոտեցումները և այլն:

1970թ. ԱՄՆ Նևադա նահանգում կայացած IUCN/UNESCO-ի համաժողովում առաջին անգամ ընդունվեց բնապահպանական կրթության լայն ընդունելությունն գտած հետևյալ սահմանումը. «Բնապահպանական կրթությունը արժեքների ճանաչման և ընկալումների պարզաբանման մի գործընթաց է: Այն կոչված է զարգացնելու մարդուն անհրաժեշտ այնպիսի հմտություններ ու վերաբերմունք, որոնք անհրաժեշտ են նրան իր մշակույթի ու կենսաֆիզիկական շրջապատի փոխհարաբերությունները հասկանալու և գնահատելու համար»:

1972թ. Ստոկհոլմում տեղի ունեցավ ՄԱԿ-ի «Մարդու շրջակա միջավայրը» խորագրով գիտաժողովը, որն ընդունեց ԲԿ-ն որպես կրթության ինքնուրույն ոլորտ, ինչը նոր կարգավիճակ հաղորդեց վերջինիս:

1975թ. հաստատվեց UNESCO/UNEP-ի բնապահպանական կրթության ծրագիրը: Նույն տարում Բելգրադում տեղի ունեցավ բնապահպանական կրթության հարցերին նվիրված միջազգային սեմինար, որտեղ ի մի բերվեցին հիմնական դրույթներն ու սկզբունքները և որպես ԲԿ-ն համընդհանուր հիմք ամփոփվեցին «Բելգրադի խարտիա» կոչվող փաստաթղթում:

1977թ. Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում UNESCO-ի 66 անդամ պետություններ մասնակցեցին ԲԿ-ն հարցերով առաջին միջկառավարական համաժողովին: ԲԿ-ն առջև դրվեց դժվարին խնդիր ձևավորել բնապահպանական վարքագիծ առանձին անհատների, խմբերի և ընդհանրապես՝ ողջ հասարակության շրջանում:

Թե՛ «Աշխարհի բնապահպանության, ռազմավարություն» (1980թ.)  
փատաթղթում, թե՛ Բնապահպանության ու զարգացման համաշխարհային  
հանձնաժողովի՝ «Մեր ընդհանուր ապագան» (1987թ.) վերնագրով զեկույցում  
ընդգծվում էր բնապահպանական կրթության կարևորագույն դերը «կայուն  
զարգացման» հասնելու գործում: ՄԱԿ-ի «Շրջակա միջավայր և զարգացում»  
համաժողովի շրջանակներում («Մոլորակի գազաթափոց», 1992թ.) կրկին  
հաստատվեց կրթության կարևոր դերը հասարակությանն առավել  
կայունության հասցնելու հարցում:

Էկոլոգիական կրթությունը Էկոլոգիական գիտելիքների նպատակային,  
ծրագրված և կրթական համակարգով ձեռք բերվող գործառույթ է:

Էկոլոգիայի ժամանակակից ուսումնասիրությունը և վերլուծությունը աշխարհի  
շատ երկրներում, նաև Հայաստանի Հանրապետությունում պարտադրել է  
Էկոլոգիական կրթության դասավանդման ծրագրեր մտցնել: Դասավանդումը  
իրականացվում է դպրոցական բուհական և հասարակական ծրագրերով և  
սահմանված կարգով:

Էկոլոգիական դաստիարակությունը նպատակաուղղված է բնապահպանական  
ակտիվ դիրքորոշում ձևավորել հասարակության մեջ: Էկոլոգիական  
դաստիարակությունը անհրաժեշտ է բոլորի համար, իրականացվում է  
բնապահպանական և Էկոլոգիական կրթական ծրագրերի դասավանդման,  
հասարակության մեջ Էկոլոգիական մտածողության արմատավորման միջոցով:  
Էկոլոգիական դաստիարակության հիմնական դրույթներն են.

1. Մարդը պատասխանատու է կենդանական և բուսական աշխարհի  
կենսաբազմազանության պահպանման համար:
2. Բնությունը օրգանական աշխարհի բնօրրանն է՝ բնությունը անվերջ է և  
անսահման, մարդ – բնություն փոխհարաբերությունները պետք է  
հավասարակշռված և ոչ թե թշնամական լինեն:
3. Որքան կենսոլորտը բազմազան է, այնքան կայուն է:
4. Էկոլոգիական ճգնաժամերը առաջանում են բնության վրա մարդու  
անթույլատրելի և ոչ հավասարակշիռ գործողություններով:
5. Համամոլորակային Էկոլոգիական մտածողության ձևավորումը  
անհրաժեշտություն է: Երկիրը մարդկության տունն է:
6. Մարդկությունը պետք է խնայողաբար և Էկոլոգիապես անվտանգ  
օգտագործի բնական ռեսուրսները:

Էկոլոգիական մշակույթը մարդկային մտածողության և բնական պայմանների համալիր ամբողջությունն է, քաղաքակիրթ վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ:

**Փոփոխություններ, բնապահպանական կրթության մեջ:**

**Դասասենյակային և բացօթյա պարապմունքներ**

Բնապահպանական կրթությունը մյուս առարկաների նման, ավանդաբար դասավանդվել է տեսական գիտելիքների փոխանցման եղանակով: Ժամանակի ընթացքում, սակայն, այս մոտեցումը վերանայվել է: Այժմ Բնապահպանական կրթությունը զգալիորեն ավելի է համապատասխանում մարդու և հասարակությունների էվոլյուցիոն զարգացման պահանջներին:

Բնապահպանական կրթության պարապմունքները շատ ավելի գործնական են դարձել: Կիրառվում են դասավանդման և ուսուցման բազմաթիվ նոր եղանակներ՝ ընդհուպ մինչև դպրոցից դուրս անցկացվող դասաժամերը:

Բնապահպանական կրթության ոլորտում այսօր առաջարկվում են նոր՝ ավելի արդյունավետ մեթոդներ, որոնց օգնությամբ ուսուցիչը կարող է ակտիվորեն ներգրավել աշակերտներին՝ դասերի ընթացքում իրենց ձեռք բերած գիտելիքներն ու երևակայությունը գործնականում կիրառելու գործում: Դա կարող է դրսևորվել, օրինակ, Հայաստանի բնապահպանական խնդիրների լուծման հնարավոր եղանակներ կամ նախագծեր որոնելու միջոցով: Պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս. ուսուցման և ուսումնառության այն եղանակը ծախսատար չէ ո՛չ ուսուցչի և ո՛չ էլ աշակերտի համար:

Հաճախ բնապահպանության դասերը ներառում են նաև այլ առարկաներ, օրինակ մաթեմատիկա և հասարակական գիտություններ: Սրա նպատակը համընդհանուր խնդիրների ըմբռնման ունակությունների զարգացումն է: Բնապահպանական կրթությունը նպաստում է քաղաքական, տնտեսական ու բնապահպանական խնդիրների փոխշաղկապվածությունն ըմբռնելուն: Աշակերտները հնարավորություն են ստանում ձեռք բերած փորձն ու քաղած դասերը կիրառել անմիջապես իրենց բակում:

Բարենպաստ եղանակին ուսուցիչը կարող է աշակերտների հետ ուսուցողական զբոսանք կատարել մոտակա զբոսայգում, բուսաբանական այգում, դաշտերում կամ սարերում: Քաղաքում, թե գյուղում, բնության յուրաքանչյուր անկյունում շատ խորն է զգացվում, թե որքան կարևոր են ծառերն առողջ շրջակա միջավայրի, նաև՝ մեր առօրյա կյանքի համար: Նման էքսկուրսիաների շնորհիվ է, որ երեխաները կարողանում են զգալ գիտական տեղեկատվության և հայրենի բնության գեղեցկության միջև ուղիղ կապը և բնապահպանական խնդիրներ լուծելու ունակություններ դրսևորել:

«Սովորել գործնականում» մոտեցումն օգնում է աշակերտներին ինքնավստահորեն դրսևորել երևույթները դիտարկելու, գիտական որոնումներ կատարելու և ստեղծագործական լուծումներ գտնելու իրենց կարողությունները:

Մենք տարբերակում ենք բնապահպանական կրթության երեք հիմնական փուլ՝ բացահայտում, դիտարկում և վերլուծություն: Դասապլաններով նախատեսված այս հմտությունների յուրացումը աշակերտներին բնապահպանության հարցերում կդարձնի առավել քաջատեղյակ և

պատասխանատու: Բացահայտում մակարդակում ներառված են դասերի օրինակներ՝ հիմնականում կրտսեր դպրոցի աշակերտների համար: Բացահայտում + դիտարկում + վերլուծություն = բնապահպանական հիմնախնդիրների իմացություն և դրանց համար պատասխանատվության ստանձնում:

Էկոլոգիական կրթությունը աշխարհագրության ուսուցման ընթացքում:

Դպրոցական աշխարհագրության Էկոլոգիական բովանդակությունը

Ժամանակակից դպրոցի խնդիրներից է անձի Էկոլոգիական մշակույթի ձևավորումը: Էկոլոգիական մշակույթն իր դրսևորումն է գտնում արտադրական և կենցաղային բոլոր ոլորտներում, այն կոչված է ապահովելու բնական միջավայրի պահպանումն ու բարելավումը:



Եկոլոգիական մշակույթը բնության նկատմամբ սովորողի գիտակցված վերաբերմունքն է, որն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունն ու զարգացումը, նպաստում է բարենպաստ պայմանների ստեղծմանը մարդու կյանքի և գործունեության համար:

Եկոլոգիական մշակույթի կարևոր բաղադրամաս են համարվում՝ 1. գիտելիքները՝ մարդ-բնություն փոխհարաբերությունների վերաբերյալ, 2. այդ փոխհարաբերությունները օբյեկտիվ գնահատելու կարողությունը, 3. համոզվունքը բնության ռացիոնալ օգտագործման և բնապահպանման անհրաժեշտության վերաբերյալ: Սովորողների Եկոլոգիական մշակույթի մակարդակը կախված է Եկոլոգիական կրթության որակից, որը պարզաբանում է մարդու տեղն ու դերը բնության մեջ:

Եկոլոգիական կրթությունը Եկոլոգիական գիտելիքների, կարողությունների, հմտությունների, սովորությունների համակարգի ձևավորման գործընթաց է, որն անձի Եկոլոգիական մշակույթի հիմքն է հանդիսանում: Եկոլոգիական և աշխարհագրական կրթությունները սերտ փոխկապակցված են, դրանց նպատակներն ու խնդիրները բազմիցս համակնում են և կայանում հետևյալում՝

1) ձևավորել աշակերտների մոտ գիտելիքներ Երկրի բնության և նրա զարգացման հիմնական օրենքների մասին, իբրև անհրաժեշտ նախապայման մարդ-բնություն փոխհարաբերության հասկացման համար, 2) ձևավորել գիտելիքներ և հմտություններ մարդ-բնություն փոխհարաբերության հետևանքների կանխատեսման և գնահատման համար, ինչպես նաև գիտելիքներ Եկոլոգիական խնդիրների լուծման սկուզբունքների, մոտեցումների և մեթոդների վերաբերյալ, 3) ձևավորել Եկոլոգիական մտածողություն, որի Էությունը Երկրի վրա ընթացող պրոցեսների փոխկապակցված ընկալումն է, բնության վերաբերյալ հուզարժեքային վերաբերմունքի ձևավորումը, բնության և բնական ռեսուրսների պահպանման անհրաժեշտության գիտակցումը սերունդների համար:

Եկոլոգիական մշակույթի ձևավորման համար Եկոլոգիական կրթությանը զուգահեռ պետք է կազմակերպվի սովորողի Եկոլոգիական դաստիարակությունը: Եկոլոգիական դաստիարակությունը որոշակի

պայմանների ստեղծումն է աշակերտի կողմից Էկոլոգիական մշակույթի յուրացման համար, որը ձևավորվել է հասարակության մեջ և պետք է փոխանցվի սերունդներին: 20-րդ դարի 80-ական թթ. Էկոլոգիա և Էթիկա գիտությունների սահմանագծին ստեղծվեց մի նոր գիտություն, որը կոչվեց Էկոլոգիական Էթիկա: Էկոլոգիական Էթիկան գիտություն է մարդու և բնության միջև բարոյական հարաբերությունների վերաբերյալ, որի հիմքում բնության ընկալումն է՝ իբրև համագոր գործընկերոջ, բոլոր կենդանի օրգանիզմների հավասար իրավունքների ընկալումն ու մարդու պահանջների և իրավունքների սահմանափակումը: Էկոլոգիական Էթիկայի սերմանումը աշակերտի գիտակցության մեջ դպրոցում Էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակներից է: Էկոլոգիական կրթությունը դպրոցում կրում է միջառարկայական բնույթ և Էկոլոգիական հարցերը ուսումնասիրվում են բոլոր բնագիտական առարկաների՝ աշխարհագրության, կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի շրջանակներում: Կենսաբանության շրջանակներում ուսումնասիրվում են կենդանի օրգանիզմների և շրջակա միջավայրի փոխհարաբերությունները, դիտարկվում են կենսոլորտի, Էկոհամակարգերի վերաբերյալ ուսմունքները: Քիմիայի շրջանակներում դիտարկվում է քիմիական տարրերի ազդեցությունը մթնոլորտի և ջրոլորտի վրա, պարարտանյութերի ազդեցությունը հողի, բույսերի, կենդանիների վրա և այլն: Ֆիզիկայի դասընթացում սովորողներն ուսումնասիրում են ռադիոակտիվ նյութերի ազդեցությունը կենդանի օրգանիզմների վրա: Այսինքն, ակնհայտ է դառնում, որ Էկոլոգիական կրթության մեջ ուսումնասիրման հիմնական ուղղություն է հանդիսանում հասարակություն-բնության փոխհարաբերությունները: Աշխարհագրական գիտության համար հետազոտության Էկոլոգիական սկզբունքը ընդունված և արդեն ավանդական դարձած ուղղություն է: Աշխարհագրության բնագավառում այս սկզբունքով զարգացող ուղղությունը կոչվում է կոնստրուկտիվ աշխարհագրություն:

Գեոէկոլոգիան ուսումնասիրում է մարդ-բնություն հարաբերությունների փոխադարձ կապերը, այդ կապերից առաջացած խնդիրները, արտադրական և բնական համալիրների փոխադարձ կապերը, բնատեխնիկական համակարգի ստեղծման հիմնահարցերը և բազմաթիվ այլ Էկոլոգիական խնդիրներ: Գլոբալ և ռեգիոնալ մասշտաբի Էկոլոգիական շատ պրոբլեմներ ունեն աշխարհագրական բնույթ, այդ իսկ պատճառով հանդիսանում են գեոէկոլոգիայի

ուսումնասիրման առարկա և առավել խորությամբ կարող են ուսումնասիրվել աշխարհագրության ողջ դասընթացում:

Դպրոցական աշխարհագրությունը բովանդակում է օրենքներ և հասկացություններ, որոնք հենքային են գեոէկոլոգիայի համար, օրինակ՝ բնության զարգացման ամբողջականության և փոխկապակցվածության մասին օրենքը, Նյութի շրջապտույտը բնության մեջ, ինչպես նաև կարևոր հասկացություններ բնական համալիրների, կենսոլորտի և աշխարհագրական թաղանթի վերաբերյալ: Դպրոցական աշխարհագրության Էկոլոգիական բովանդակության կարևոր բաղադրամաս են համարվում Էկոլոգիական կարողությունները՝

1. կարողանալ բացատրել բնական ռեսուրսների յուրահատկությունները.

2. գնահատել դրանք,

3. կանխատեսել բնության վրա ունեցած մարդու ներգործության հետևանքները, 4. կարողանալ կազմել սխեմատիկ Էկոլոգիական բովանդակության քարտեզներ՝ տարածքի փոքր հատվածների՝ համար և այլն: Գեոէկոլոգիական գիտելիքները սովորողների մոտ ձևավորվում են դպրոցական աշխարհագրության ողջ դասընթացի ուսումնասիրման ընթացքում:

Ձևավորվում են աշակերտների արժեքային համակարգն ու արժեքային կողմնորոշումները, բնության բաղադրամասերի փոխկապակցվածության և ամբողջականության գաղափարը, մարդ-բնություն փոխհարաբերությունները, առօրյա կյանքում բնության մեջ գոյատևելու կանոնների պահպանման անհրաժեշտությունը: Ուսումնասիրվում են բնության զարգացման հիմնական օրինաչափությունները (ամբողջականությունը, Նյութի շրջապտույտը, զոնայականությունը և այլն), անթրոպոգեն գործոնի ազդեցությունը տարբեր մայրցամաքների բնության վրա, բնապահպանական միջոցառումների (արգելոցների, արգելավայրերի, ազգային պարկերի) կազմակերպումը և այլն:

Էկոլոգիական կրթության համար մեծ նշանակություն ունեն ինքնուրույն գործնական աշխատանքները, որոնք ներառում են առաջադրանքների երեք տեսակ՝ 1. դիտարկել և բնութագրել մարդու ազդեցության տակ գտնվող բնական օբյեկտը,

2. բացատրել Էկոլոգիական խնդրի էությունն ու բացահայտել պատճառահետևանքային կապը «հասարակություն-բնութ յուն» համակարգում, 3. առաջարկել Էկոլոգիական խնդրի լուծման որևէ ուղի, ապացուցել և պաշտպանել սեփական տեսակետը:

Ինքնուրույն աշխատանքների բովանդակության բարդեցումը պետք է սկսվի Էկոլոգիական խնդրի պատճառի և բնույթի նկարագրումից և ընթանա մինչև նրա լուծման եղանակների կանխատեսումը, մտավոր գործողությունների բարդեցումը պատճառահետևանքային կապերի բացահայտումից մինչև օրինաչափությունների պարզաբանումը, ուսուցման եղանակների բարդեցումը՝ համապատասխանաբար, պետք է ընթանա խնդրի նկարագրումից մինչև հետևանքների կանխատեսումը, խնդրի լուծումը և ի վերջո բնության ռացիոնալ օգտագործման նկատառումներով տարածքի զարգացման սեփական մոդելի նախագծումը:

## Եզրակացություններ և առաջարկություններ

Դատելով վերը շարադրվածից, ակնհայտ է, որ Էկոլոգիան ուսմունք է մարդկության գոյատևման և կայուն զարգացման ուղիների մասին:

Պետք է գիտակցել, որ մարդն իր շարունակական գոյության համար կախված է այն միջավայրի բարվոք վիճակից, որտեղ ինքը ծագել ու զարգացել է, որ այսօր այդ միջավայրի կենսաքիմիական փոփոխությունները կարող են մահացու լինել մարդու համար:

Կարելի է ասել, որ այսօրվա մարդու մոտ չկա սրտացավություն, հոգատարություն բնության նկատմամբ և չկա ձևավորված Էկոլոգիական գիտակցություն:

Բնապահպանական հարցում իրենց գործուն մասնակցությունը պետք է ունենան կրթական համակարգի բոլոր օղակները՝ նախադպրոցական հիմնարկները, դպրոցը, բարձրագույն ուսումնական հաստատությունները և ողջ հասարակությունը:

Ուստի առաջարկում եմ իրականացնել կազմակերպված, պլանավորված Էկոլոգիական դաստիարակություն: Ժամանակը պահանջում է իրականացնել համալիր դաստիարակություն: Դա նշանակում է իրականացնել դաստիարակություն ընդհանուր համակարգի բոլոր բաղադրամասերի՝ մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, տնտեսագիտական, Էկոլոգիական դաստիարակության առումով: Յուրաքանչյուր սովորող պետք է Էկոլոգիական տեսանկյունից ունենա ոչ թե որոշակի, այլ կայուն գիտելիքներ անկենդան, կենդանական, բուսական աշխարհի մասին:

Գործարարության այս դարաշրջանում անհրաժեշտ է որ յուրաքանչյուր գործարար իմանա, գիտակցի իր գործարքի Էկոլոգիական հիմնախնդիրները և առաջնորդվի Էկոլոգիական առաջնայնության սկզբունքով, այլ ոչ թե սպասվելիք շահույթի առավելության սկզբունքով:

Իրավաբաններն առաջնորդվեն ոչ միայն ընդունված Էկոլոգիական օրենսդրությամբ, այլ Էկոլոգիական գիտակցությամբ: Սոցիոլոգները հաշվի առնեն մարդու առողջ կենսակերպի Էկոլոգիական հիմնախնդիրները:

Եվ պարզապես ի լրումն այս ամենի հարգել և պահպանել մարդ-բնություն փոխհարաբերությունները:

## Օգտագործված գրականության ցանկ Չավելված (հղումներ)

Ս. Մ. Գրիգորյան - Էկոլոգիա

Կ. Վ. Գրիգորյան, Ա. Յ. Եսայան, Յ. Գ. Ժամհարյան, Ա. Վ. Խոյեցյան, Յ. Ս. Մովսեսյան, Գ. Պ. Փիրումյան - Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ

Մ. Դավթյան - Շրջակա միջավայր և բնապահպանություն

Կ. Ուեսլի - Միտք սերմանի՛ր, ծառ տնկի՛ր

[www.inf.ru](http://www.inf.ru)

[www.biosafety.ru](http://www.biosafety.ru)

[www.seu.ru](http://www.seu.ru)

[www.slowfood.com](http://www.slowfood.com)

[www.azatamtutyun.am](http://www.azatamtutyun.am)

[www.gmo.ru](http://www.gmo.ru)